

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Գլխավիճակ, Օհայո

Հովիւ

Վազգէն Ծ. Վրդ. Գրաբարար

Օգոստոս 7, 1964

Յարգելի Պր. Մանուէլեան

Մեծալորդ տեար Ս. Մանուէլեան,
Դիւանապետ Հայոց Առաջնորդարանի
ի Նիւ-Եորք.

#7410

Յարգելի Պր. Մանուէլեան,

Սոյն գրութեամբ երկու խնդրանքներ ունիմ ներկա-
յացնելիք.

Կը հաճէիք կրկին մեզ իմացնել թէ իմ Շօնտոնէն-
Գլխավիճակ ճամբու ծախքիս տարբերութիւնը ինչ շուրի
մէջ է: Ծիսական Խորհուրդս կը խորհի թէ այս հարցը այս-
քան երկարաձգուելիք հարց մը պէտք չէր որ ըլլար
եւ շատոնց պէտք էր որ կարգադրուէր:

Պիտի խնդրէի նաեւ որ մեր եկեղեցիին համար
մկրտութեան վկայագրեր ղրկուէին մօտիկ ապագային
որովհետեւ մէկ օրինակ միայն մնացած է: Եթէ իւրա-
քան չիւր տետրակի մէջ 10 օրինակ ունիք, հաճեցէք 3
տետրակ ղրկել, իսկ եթէ իւրաքանչիւր տետրակի մէջ
10 օրինակէ աւելի կայ, բարի եղէք երկու տետրակ
ղրկել:

Ձայսոսիկ հաղորդելով ձերդ սիրելութեան մնամ

աղօթարար
[Handwritten signature]

Վ.Մ.Վ. ԳՐԱՐԱՐԱՆ
Հոգեւոր հովիւ հայոց Գլխավիճակ

Թիւ 11457
Օգոստոս 14, 1964

Հոգեշնորհ
Տ. Մ. Վրդ. Գրպրոսլեան
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
Գլխավէնտ.

Սիրելի Հայր Սուրբ,

Զանի մը օր առաջ առանձին ծրարով Ձեզի դրկուեցաւ մկրտութեան վկայագիրէն մեծ պրակ մը, որ ժամանակի մը համար բաւական պիտի ըլլայ Ձեզի:

Լոնտոնէն-նիւ Եորթ Ձեր ճամբու ծախքին տարբերութիւնը 74.00 տուար է: Անշուշտ այս գումարէն պէտք զեղչուի տասը տուար՝ որ վըճարուած է Գաղթային Գրասենեակ ներկայացուած դիմումնագրին համար:

Այս առթիւ, "Հայաստանեայց Եկեղեցի"ի խմբագիր Տ. Եղիշէ Վրդ. Կիզիքեանի բացակայութեան, պիտի ուզէի մտերմաբար Ձեզի հարցնել թէ արդեօք Ձեր կենսագրականն ու լուսանկարը Հայր Սուրբին յանձնած էիք հրատարակութեան համար, կամ այդ մասին Ձեզի դիմում եղած էր թէ ոչ: Սրբազան Հայրը երէկ, խօսակցութեան մը պահուն դիտել տուաւ թէ Ձեր թեմին մէջ փոխադրուելուն առիթով թերթին մէջ ոեւէ գրութիւն չէ երեւցած Ձեր մասին:

Արդ, պիտի խնդրէի որ բարեհաճէիք Ձեր կենսագրականն ու լուսանկարը Առաջնորդարան դրկել առաջին առիթով, որպէսզի Հայր Եղիշէի յանձնեմ անոր Մերձաւոր Արեւելքէն վերադարձին: Վստահ եմ որ եղած թերաջումին մէջ ոչ մէկ դիտաւորութիւն կայ, մանաւանդ խմբագրին կողմէ:

Յուսալով Ձեզմէ լսել այս մասին կարելի փութով,

Մնամ խորին յարգանօք

Սուրեն Մանուէլեան



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Թիւ 10187
Յուլիուս 10, 1964

Բարեշնորհ
Ներսէս Սարկաւազ ձեպէճեան
Հոգեւոր Մատակարար Գլխավէնտի Հայց.Եկեղեցւոյ
Գլխավէնտ.

Սիրելի Ներսէս Սարկաւազ,

Հաճոյքն ունիմ Ձեզի հաղորդելու թէ Առաջնորդական Փոխանորդ
Հոգեշնորհ Տ. Եղիշէ Վրդ. Կիզիբեան, ընկերակցութեամբ Ձեր համայնքի
Հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Վազգէն Վրդ. Գպրսլեանի, Գլխավէնտ պի-
տի ժամանէ Երևան թէտ էյրլայնս 62 Թոխչոզ, Զորեքշաբթի, Յուլիուս
15, յետ միջօրէի ժամը 3.58ին:

Առաջնորդ Սրբազանի կարգադրութեամբ՝ Առաջնորդական Փոխանորդ
Հայր Սուրբը՝ Ձեզի եւ Պատուարժան Մխական Խորհուրդին պիտի ներկա-
յացնէ պաշտօնապէս Ձեր նոր Հոգեւոր հովիւը:

Հաճեցէք զիրենք դիմաւորութեան համար անհրաժեշտ կարգադրու-
թիւնը ընել:

Մնամ սիրով եւ յարգանք

Սուրէն Մանուէլեան
Գիւանապետ

Հոկ.14, 1965

Հոգեշնորհ
Վազգէն Մ.Վրդ.Գրպրըսլեան
Հոգեւոր Հովիւ Ս.Գրիգոր Նարեկացի եկեղեցւոյ
Քլիվլընտ, Օհայօ

Սիրելի Հայր Վազգէն,

Ստացած եմ Ձեր Հոկ.9 թուակիր նամակը եւ անմիջապէս առանձին
փոսթով ղրկած՝ 5 Մայրենի Լեզու Ա.գիրքը:

Շատ ուրախ եմ որ Հայ դպրոցը վերաբացած էք այս տարի եւս:
Յուսամ երիտասարդ ծնողները աշխատանք պիտի տանին աւելցնելու
համար աշակերտներին թիւը:

Շատ ուրախ պիտի ըլլայի եթէ պարբերաբար լուր տաքիք մեզի
դպրոցի ընթացքին մասին:

Յաջողութեան մաղթանքներով,

Մնամք յարգանքով՝

ԱՐՏԱՇԷՍ ՄԿՐՏԻՉԵԱՆ
Կրթ.Տեսուչ

Յ.Գ. Ներքակ՝ ղրկուած գիրքերուն պարտացուցակը:

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ
Գլխավոր, Օհայո



ST. GREGORY OF NAREK
ARMENIAN APOST. CHURCH
666 Richmond Road
Cleveland, Ohio 44124, U.S.A.

Հովիւ - Վազգէն Մ. Վրդ. Գեղարքայեան

Area Code 216 - Tel. 381-6990

Pastor - Very Rev. Vasken Kebreslian

Հոկտ. 9, 1965

Յարգելի Պր. Ա. Մկրտիչեան,

Ուրախ եմ ծանուցանելու թէ այս տարի Հայերէնի Հե-
տեւորդներու թիւը 9 է, բաղկացած երկու դասարանի-
րէ. անցեալ տարուայ աշակերտները երկու եւ իսկ այս
տարուանը 7: Ուսուցիչը ես եմ ուրիշ ուսուցիչներու
բացակայութեան: Դասաւանդաթիւները կը կատարուին
շաբաթ օրերը առաւօտեան, ժամը 10.30-12.30: Այս
տարուայ ուսանողները 7-9 տարեկան եւ: Դասաւանդու-
թիւները սկսան Սեպտ. 25ին եւ կը յուսանք պիտի
շարունակենք մինչեւ յունիսի մերջը:

Այս արթիւ պիտի խնդրէի որ Յովհաննէս Սարկաւազի
Հայերէնի դասագրքէն՝ Հայերէն Լեզու՝ անունով մեզի
ղրկէիք 5 օրիակ:

Կանխայայտ շնորհակալութեամբ,

Աղօթարար
V. V. V. V. V.